

# ՖԵՅՍԲՈՒՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՕԳՏԱՏԵՐԵՐՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

*Հայաստանում Ֆեյսբուքի օգտատերերի շրջանում  
անցկացրած հարցումների արդյունքներ*





ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն երևանյան գրասենյակ



Սույն ուսումնասիրությունն անցկացվել է Հայաստանում միջազգային չափորոշիչներին համապատասխան ընտրական գործընթացների կատարելագործման ծրագրի շրջանակներում, որն իրականացնում է ԵԱՀԿ երևանյան գրասենյակը՝ Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ: Փաստաթղթում արտահայտված տեսակետները որեւէ կերպ չեն կարող ընկալվել որպես Եվրամիության կամ ԵԱՀԿ պաշտոնական կարծիքի արտացոլում:

Հետազոտության գաղափարը, մեթոդաբանությունն ու արդյունքների վերլուծությունը՝ «Ռեզիոն» հետազոտական կենտրոնի տնօրեն Լատրա Բաղդասարյանի

Հարցումներն անցկացրած խումբը՝ Սոնա Քյուրքչյան, Անժելա Չոբանյան, Սոսի Խանիկյան, Լենա Նազարյան, Վահե Սարուխանյան

Արդյունքների տեխնիկական մշակումը, աղյուսակներն ու գրաֆիկները՝ Շողիկ Ստեփանյանի



# Ֆեյսբուքը Հայաստանում. օգտատերերն ու օգտագործումը

Հայաստանում 2013թ.նոյեմբերի դրությամբ Ֆեյսբուք սոցիալական ցանցն օգտագործողների թիվը մոտ 560 հազար էր: Անցած երկու ամիսների ընթացքում գրանցվել էր մոտ 20 հազարի ավել, ինչը վերջին երկու տարիների ընթացքում օգտատերերի քանակի ավելի միջին կայուն ցուցանիշ է:


Ֆեյսբուքի Հայաստանյան վիճակագրության մյուս տվյալները նույնպես վկայում են այս սոցցանցի գնալով ավելի ու ավելի պոպուլյար դառնալու մասին: Ներկայումս Ֆեյսբուքից օգտվում է երկրի բնակչության մոտ 19%-ը (ամեն 5-րդ բնակիչ) եւ ինտերնետ օգտագործողների մոտ կեսը (42%)–ը: Մակայն այս ցանցի հայաստանյան ֆենոմենի առիթով հնչեցված իրարամերժ գնահատականներից հասկանում ենք, որ մասնագետները շարունակում են բաժանվել երկու խմբի՝ սոցիալմեդիա օպտիմիստների եւ սոցիալմեդիա պեսիմիստների: Օրինակ, մեկ առանձին վերցված հարցում՝ թե արդյո՞ք հեռուստատեսությունը շարունակում է մնալ տեղեկատվական ամենաազդեցիկ միջոցը երկրում, կան երկու իրարամերժ պատասխաններ: Այո, քանի որ կան ինտերնետ հասանելիության խնդիրներ եւ հեռուստատեսության միջոցով են հաստատվում պաշտոնական քաղաքական օրակարգերը: Եվ՝ ոչ, քանի որ հեռուստատեսությունը զիջում է սոցիալական մեդիային, եւ մասնավորապես սոցիալական ցանցերին իր օպերատիվությամբ, ինտերակտիվության աստիճանով, բազմազանությամբ եւ իրական պատկերները հնարավորինս վստահելի ճշգրտությամբ մատուցելու հարցում:

Ո՞րն է Հայաստանում Ֆեյսբուք սոցիալական ցանցի՝ գնալով ավելի պոպուլյար դառնալու ֆենոմենը: Ի՞նչն է մղում մարդկանց դեպի հենց այս ցանցը. Հայաստանում Ֆեյսբուքի մասին հանրային մակարդակով բավական հաճախ տարվող խոսակցությունները, այստեղ հանրահայտ անձանց ներկայությունը, մյուս սոցցանցերի համեմատ ավելի հարմար տեխնիկական հնարավորությունները, թե՞ մեկ այլ բան: Ի՞նչն է միավորում, եւ հակառակը, տարբերում օգտատերերին: Ի՞նչ նախասիրություններ ունի միջին վիճակագրական օգտատերը Ֆեյսբուքում:

Քաղաքական եւ հասարակական գործիչների, մեդիա շրջանակների, կրթամշակութային գործիչների եւ կառույցների, բիզնես կառույցների եւ անհատ ձեռներեցների, այսպես կոչված սովորական քաղաքացիների (օգտատերերի 5 խմբեր, յուրաքանչյուրում՝ 30-ական հարցված, ընդամենը՝ 150) շրջանում մեր անցկացրած հարցազրույցներն ի վերջո բացահայտեցին այս հարցերի պատասխանները:

# Օգտատերերի սոցիալական ցանցերում գործելու փորձը


Հարցվածների 2/3-ն ունի Ֆեյսբուքից օգտվելու 3-5 տարվա փորձ (գրանցվել էլ օգտվում են Ֆեյսբուքից 2007-2010թթ.-ից): Մյուսները՝ հիմնականում 1-2 տարվա օգտատերեր են (գրանցվել էլ օգտվում են Ֆեյսբուքից 2011-2013 թթ.):



Նախքան ՖԲ օգտատեր դառնալը 150-ից 68 օգտատեր (մոտ 45%) ունեցել է այլ սոցիալական ցանցերից/սոցիալական մեդիաներից օգտվելու փորձ: Ընշող մեծամասնությունը՝ Օդնոկլասնիկի եւ ՎԿոնտակտե ցանցերն են օգտագործել:

Մնացածի համար (82 օգտատեր, մոտ 55%) սոցիալական ցանցերի հետ ծանոթությունը տեղի ունեցավ ՖԲ-ի միջոցով:

Մոտավորապես նույնքան մարդ՝ 66 օգտատեր (44%) ՖԲ-ի հետ միաժամանակ օգտվում է նաև այլ ցանցերից եւ սոցիալական մեդիաներից: Մնացածն օգտվում են միայն ՖԲ-ից:



Նրանք, ովքեր օգտվում են միայն ՖԲ-ից, տալիս են ընդհանուր առմամբ հետևյալ տիպային բացատրությունները:

**Այլ ցանցերից չեմ օգտվում, քանի որ՝**

- ՖԲ-ն իր հնարավորություններով բավարարում է ինձ լիովին,
- այդքան ժամանակ չունեմ,
- չհավանեցի Twitter-ը, անձնական շատ հարցեր է պահանջում,
- ՖԲ-ն ավելի մատչելի է, Twitter-ը փորձեցի, լավ չհասկացա, թե ինչպես է այն կառուցված,
- իմ ծանոթ- բարեկամները ՖԲ-ում են, նրանց հետ շփումը բավարարում է,
- համարում եմ, որ Օդնոկլասնիկին ավելի ինքնահաստատվող, պատանեկան տարիքի մարդկանց համար է, և այնտեղ լուրջ խնդիրներ չեն արձարծվում,
- ՖԲ-ում ավելի հետաքրքիր ու լուրջ լսարան կա:

## Օգտատերերի լսարանները

Այս 5 խմբերում հայտնվել են օգտատերեր, որոնք ունեն տարբեր չափերի ՖԲ լսարաններ (լսարան ասելով նկատի ունենք նրանց էջերը հավանողների` Fans, կամ էջերին հետետողների եւ ընկերների քանակը):

- Հասարակական-քաղաքական գործիչների, քաղաքացիական ակտիվիստների այս խմբում ներգրավված օգտատերերի ամենավոքոր լսարանը` 383 է, ամենամեծ լսարանը` 17 248 է:
- Բիզնես կառույցների/անհատ ձեռներեցների ՖԲ-յան լսարանները նվազագույնը` 100 է, առավելագույնը` 77500:
- Լրագրողների/մեդիա ղեկավարների լսարանները 147 -ից մինչև 10991 են:
- Կրթամշակութային կառույցների, արվեստի գործիչների լսարանները` 163 -ից մինչև 6081:
- Սովորական քաղաքացիների լսարանները` 18-ից մինչև 609:

Իրենց լսարանները օգտատերերը ձեւավորում են մի քանի սկզբունքներով.


- ընկերանում են բոլորի հետ եւ ընդունում են բոլորի առաջարկները, առանց առանձնապես հետեւելու, թե ցանկում ովքեր կան (51 պատասխան),
- ընկերանում են միայն իրենց ծանոթ մարդկանց հետ (33 պատասխան),
- ընկերանում են բոլորի հետ, հետո անցանկալիներին ջնջում են ցանկից (25 պատասխան),
- ընկերանում են ըստ ընդհանուր հետաքրքրությունների, ըստ ընդհանուր ծանոթների եւ այլ սկզբունքներով (40 նման պատասխաններ):

Այս խմբերի օգտատերերի զգալի մասը ՖԲ-ում շփվում է միայն Հայաստանում եւ այլ երկրներում բնակվող հայերի հետ:

Այլազգիները հիմնականում կազմում են օգտատերերի լսարանի որոշ (ոչ մեծ) հատվածը:

# Ակտիվ եւ պասիվ օգտատերերի մասին պատկերացումները

Ի՞նչ են հասկանում «Ֆեյսբուքյան ակտիվ կամ պասիվ օգտատեր» ասելով: Այս հարցը պարզելու համար մենք խնդրել էինք պատասխանել «Դուք ձեզ ակտիվ օգտատեր համարո՞ւմ եք (ինչո՞ւ)» հարցին:



Մեծ մասը (69%) իրեն միանշանակ համարում է ակտիվ, իսկ 27%-ը՝ միանշանակ պասիվ օգտատեր: Եվ ընդամենը 5%-ը նշում է, որ իր ակտիվ կամ պասիվ օգտատեր լինելը կախված է իրավիճակներից: Իրենք իրենց պասիվ օգտատեր համարողներ կան հարցվածների բոլոր խմբերում, սակայն ամենից շատ նրանք սովորական քաղաքացիների խմբից են:

**Իրենք իրենց ակտիվ օգտատեր գնահատողները դա հիմնավորում են հետևյալ կերպ.**

**Բիզնեսի ներկայացուցիչներ/ Ակտիվ եմ, քանի որ`**

	մեր էջը պարբերաբար թարմացնում ենք,
	ամեն օր մեր բիզնեսի մասին առնվազն մեկ նորություն ենք տարածում,
	ՖԲ-յան պրոյեկտներ ենք իրականացնում, մրցույթներ ենք կազմակերպում
	հաճախորդների հետ ՖԲ-ի միջոցով կապ ենք պահպանում եւ պատասխանում ենք նրանց հարցերին:

**Հասարակական-քաղաքական գործիչներ, քաղաքացիական ակտիվիստներ/  
Ակտիվ եմ, քանի որ`**

	ամեն (կամ գրեթե ամեն) օր գրառում եմ կատարում ՖԲ-ում,
	ամեն օր բավական շատ ժամանակ եմ անցկացնում ՖԲ-ում (ընդ որում` բավական շատ ժամանակ ասելով նրանք նկատի ունեն մի դեպքում մինչեւ 1 ժամը, մյուս դեպքում` առնվազն 2 ժամը եւ այլն),
	ունեմ մեծ լսարան (5000 –ից ավելի, 17 000-ից ավելի) եւ շփվում եմ մեծ թվով մարդկանց հետ,
	օգտագործում եմ ցանցը որպես աշխատանքային հիմնական գործիք,
	ստանում եմ բազմաթիվ հաղորդագրություններ ու արձագանքներ տարբեր օգտատերերից,
	իմ ՖԲ-յան գրառումները դառնում են լայն քննարկումների առարկա,
	ընդգրկված եմ մի շարք խմբերում,
	ՖԲ-ն օգտագործում եմ որպես անձնական լրատվամիջոց:



### Լրագրողներ եւ մեդիա ղեկավարներ/ Ակտիվ եւ, քանի որ՝

	աշխատում եւ ետ չմնալ իրադարձություններից եւ տեղեկատվություն տարածել
	ամեն ինչ անում եւ ՖԲ-ում, օգտագործում եւ ՖԲ-ը որպէս կապի այլ միջոցներին փոխարինող գործիք,
	միշտ/ կամ գրեթէ միշտ օնլայն եւ, շատ ժամանակ եւ ծախսում ՖԲ-ում,
	կէս ժամը մէկ հետեւում եւ ֆեյսբուքյան թարմացումներին եւ տեղյակ եւ այստեղ կատարվող բոլոր անցուդարձերից,
	ունեն մեծ լսարան:

### Կրթամշակութային կառույցներ եւ արվեստի գործիչներ/ Ակտիվ եւ, քանի որ՝

	թարմացնում եւ էջս, տարածում եւ տեղեկատվություն,
	կապ եւ պահպանում հանդիսատեսի հետ,
	օրը մի քանի անգամ մտնում եւ ՖԲ:

### Սովորական քաղաքացիներ/ Ակտիվ եւ, քանի որ

	ողջ ազատ ժամանակս ( կամ ինչ-որ ժամանակ) ացկացնում եւ ՖԲ-ում,
	ամեն օր հետևում եւ նորությունների ժապավենին, ընկերներիս գրառումներին,
	նշում եւ իմ այցելած վայրերը, տեղադրում եւ լուսանկարներ, մասնակցում եւ քննարկումներին:

### Իրենք իրենց պասիվ օգտատեր գնահատողները դա հիմնավորում են գլխավորապէս՝

	ժամանակի սղությամբ,
	ՖԲ-ում միայն լուրերին ծանոթանալու եւ քննարկումներին չմասնակցելու իրենց սովորությամբ:

Այլ խոսքով՝ ՖԲ-ում ակտիվ կամ պասիվ լինելը օգտատերերը կապում են մի դեպքում իրենց կատարած գործողությունների բնույթի, մյուս դեպքում՝ սոցցանցում անցկացրած ժամանակի, երրորդ դեպքում՝ ՖԲ մտնելու հաճախականության հետ, հիմք ընդունելով տարբեր չափանիշներ:

## ՖԲ-ում անցկացրած ժամանակը՝ կախվածության նշաններով

Մեր խմբերի օգտատերերի մեծ մասը ՖԲ է մտնում ամեն օր (օրը մեկ կամ մի քանի անգամ) կամ էլ հայտարարում է, որ միշտ օնլայն է: Այսպես են նշել իրենց ակտիվ եւ պասիվ համարող օգտատերերի ճնշող մեծամասնությունը (103 իրենց ակտիվ անվանած օգտատերերից՝ 72-ը եւ 40 պասիվ օգտատերերից 33 -ը): Ակտիվ օգտատերերի մոտ կեսը ՖԲ-ում անցկացնում է առնվազն օրական 2 ժամ: Հետաքրքիր է, որ պասիվների խմբին իրենց դասած օգտատերերի 40% -ը նույնպես ՖԲ-ում օրական անցկացնում է երկու եւ ավելի ժամ: Իսկ այս խմբի 33%-ը՝ ամեն օր մինչեւ 1 ժամ (Տես՝ Հավելված, Աղյուսակ 1):

## Ֆեյսբուքյան ինտերակտիվություն


150 օգտատերեր մեր խնդրանքով նկարագրել են, թե ինչպես են արձագանքում սովորաբար իրենց դուր եկած, կամ հակառակը՝ դուր չեկած տեղեկատվությանը ՖԲ-ում: Պատասխանների մոտ 2/3-ի համաձայն արձագանքը լինում է անպայման Like, Share կամ Comment կոճակների կիրառմամբ, այսինքն՝ հրապարակային: Մնացած 1/3 -ում կամ արձագանքը լինում է մտովի, կամ այս երեք կոճակներից որեւէ մեկը կիրառվում է ծայրահեղ հազվադեպ: Ընդ որում՝ իրենց վերաբերմունքը ցանցում անպայման արտահայտողների եւ այսպես կոչված «միայն կարդացողների» խմբերում կարելի է գտնել եւ իրենց ակտիվ, եւ իրենց պասիվ համարած օգտատերերի (Տես՝ Հավելված, Աղյուսակ 2):

# Ֆեյսբուքը որպես տեղեկատվության աղբյուր

«ՖԲ-ը ձեզ համար ավելի շատ տեղեկատվության տարածման, թե՛ ստացման միջոց է» հարցի պատասխաններից պարզ է դառնում, որ այս ցանցը ինֆորմացիայի ստացման աղբյուր դիտարկողների եւ այն որպես ինֆորմացիայի տարածման գործիք կիրառողների քանակի միջեւ տարբերությունը մեծ չէ:

## Ֆեյսբուքը Ձեզ համար տեղեկատվության տարածման, թե՛ ստացման միջոց է

■ Տարածման ■ Ստացման ■ Եւ տարածման, եւ ստացման



Հարցվածների 42%-ը նշում է, որ ՖԲ-ն իրենց համար տեղեկատվության ստացման աղբյուր է, 30%ը՝ որ այն տարածման միջոց է, եւ 27%-ի համար այն հավասարապես եւ ստացման, եւ տարածման միջոց է:

Սպասելի էր, որ ՖԲ-ը գլխավորապես տեղեկատվության ստացման միջոց են համարել սովորական քաղաքացիների խմբում (30 հոգուց այդպես են պատասխանել 28-ը): Չի զարմացնում նաեւ այն հանգամանքը, որ ՖԲ-ը տեղեկատվության տարածման միջոց են հիմնականում դիտարկում նաեւ այն խմբերի օգտատերերը, որոնց ներկայությունը ՖԲ-ում պայմանավորված է որոշակի կամ ուղղակի գովազդի անհրաժեշտությամբ՝ բիզնեսի, մշակույթի եւ կրթության ներկայացուցիչներ, հասարակական-քաղաքական գործիչներ:

Միակ անակնկալը լրագրողների ու մեդիա ղեկավարների խումբը մատուցեց իր պատասխանների արդյունքներով. 30 հոգուց 19-ի համար (63%) ՖԲ-ը տեղեկատվության ստացման աղբյուր է, 5 մեդիա ներկայացուցչի համար տարածման, եւ 6-ի համար եւ տարածման, եւ ստացման միջոց է:

## Տեղեկատվության ավտերնատիվ կամ հավելյալ աղբյուր

Չնայած այն հանգամանքին, որ օգտատերերի համար ՖԲ-ը նախելատառջ տեղեկատվության ստացման եւ տարածման հարթակ է, սակայն այն ունի տեղեկատվության բացառիկ աղբյուրի նշանակություն հատկապես լարված իրավիճակներում, քանի որ հենց այդ օրերին տեղեկատվություն ակտիվորեն ստացվում են ինչպես մեդիաներից, այնպես էլ առանձին օգտատերերից եւ նրանց խմբերից (64 պատասխան):


56 պատասխանի համաձայն ՖԲ-ը կատարում է այսպես կոչված տեղեկատվական դաջեթի դեր, քանի որ մանրամասների համար միեւնույն է պետք է կարդալ մամուլ, դիտել հեռուստատեսություն, ծանոթանալ այլ ՁԼՄ-ների հաղորդագրություններին:

Եվ միայն 24 օգտատերեր (հարցվածների մոտ 1/5-ը) ընդգծում են իրենց մեդիանիհիլիզմի մասին՝ հայտարարելով, որ հիմնականում ծանոթանում են միայն ՖԲ-յան տեղեկատվությանը, մամուլ չեն կարդում, հեռուստատեսություն չեն դիտում:

## Ֆեյսբուքը հանրային անցուղարձերի խոհանոց

Ֆեյսբուք ցանցի հետ կապված մեր «Ռեգիոն» կենտրոնի նախորդ հետազոտությունների արդյունքում արդեն կարծիք էինք հայտնել, որ Հայաստանում ընթացող կարեւորագույն հանրային գործընթացները կամ սկիզբ են առնում, կամ զարգանում են Ֆեյսբուք սոցիալական ցանցի ակտիվ մասնակցությամբ: Համենայնդեպս, գոնե այս կամ այն գործընթացի կարեւորությունը չափվում է Ֆեյսբուքում դրան տրվող նշանակության աստիճանով: Ընդ որում՝ այդպես են անում նաեւ երկրում որոշումներ կայացնողները (տես՝ <http://regioncenter.info/hy/projects/5.html>):

Ուստի, մեր հարցումների ժամանակ առաջ քաշեցինք նաեւ «Արդյո՞ք ՖԲ-ն արտացոլում է երկրում տիրող հանրային իրական կարծիքների ողջ բազմազանությունը» հարցը:



76 (51%) օգտատիրոջ պատասխանն «Այո» է (արտացոլում է ողջ բազմազանությունը), 69 (46%) հոգի նշում է, որ այդ բազմազանությունը չի արտացոլվում ՖԲ-ում, եւ հարցին դժվարացել է պատասխանել ընդամենը 5 (3%) օգտատեր:

Որ Ֆեյսբուքում երկրում առկա հանրային կարծիքների ողջ ներկայանակը չես գտնի, պնդում են հասարակական-քաղաքական գործիչների եւ լրագրողների խմբերի մեջ ընդգրկված օգտատետերի մեծ մասը: Հիմնավորմամբ, որ Հայաստանի բոլոր խավերը չեն ներկայացված ՖԲ-ում, ՖԲ-ում ավելի քիչ են շրջաններում բնակվող մարդիկ եւ այլն:

Հակառակ կարծիքը (այսինքն՝ որ ՖԲ-ն արտացոլում է երկրում առկա հանրային կարծիքների ողջ բազմազանությունը) գերակշռում է արվեստի գործիչների եւ սովորական քաղաքացիների խմբերում:


Բիզնեսի ներկայացուցիչների խմբում «արտացոլում է» եւ «չի արտացոլում» -ի կողմնակիցները նույն քանակի են՝ 14 –ական օգտատեր, դժվարացավ տալ պատասխան միայն 2 օգտատեր:

# Պահվածքը վիրտուալ եւ ռեալ ռեժիմներում

Տարբերվո՞ւմ է, արդյոք, հարցված օգտատերերի եւ նրանց կարծիքով՝ նրանց ՖԲ-յան ընկերների պահվածքը ցանցում եւ իրական կյանքում:

Մոտ կեսի գնահատմամբ Ֆեյսբուքյան օգտատերերի օֆլայն եւ օնլայն պահվածքը նույնն է: Հարցվածների մոտ 1/5-ը գտնում է, որ տարբեր են: Մնացածը տվել են մոտավորապես հետեւյալ բովանդակության պատասխան՝ «Ես, այո, նույնն եմ, ում անձամբ ճանաչում եմ, նույնպես, ում չեմ ճանաչում, չեմ կարող ասել»:

**ՖԲ-ում Դուք, ձեր ընկերներն իրենց պահում են այնպես, ինչպես իրական կյանքում**



Թե ինչո՞վ են տարբերվում օգտատերերի ցանցային եւ իրական կյանքում դրսեւորած պահվածքները, պարզ է դառնում «Ոչ» պատասխանաձևերի բացատրություններից:

## Վիրտուալ եւ իրական պահվածքները տարբեր են, քանի որ՝

	փորձում են ՖՖ-ի միջոցով ռեալիզացնել այն, ինչ կյանքում չեն կարողանում,
	օնլայնում ավելի անկեղծ են, մանավանդ, երբ երկար ենք «խոսում»,
	կենդանի հանդիպումների ժամանակ նրանք կարող են արտահայտել մեկ կարծիք, իսկ ՖՖ-ում՝ այսինքն հանրության համար, բոլորովին այլ կարծիք,
	վիրտուալ աշխարհում մարդիկ անկեղծ են/ավելի անզուսպ են,
	մարդիկ փորձում են երևալ ավելի ինտելեկտուալ, խելացի, ճաշակով, զարգացած, բարի, քան կան իրականում,
	մարդիկ ՖՖ-ում ավելի համարձակ են, բազմաթիվ գաղափարական առաջարկներ կանեն, կքննադատեն, բայց փողոց դուրս կգան նրանցից հաշվածները:

## Ֆեյսբուքյան արդյունքներ ռեալ իրականության մեջ

Հանրային ո՞ր բնագավառներում է ՖՖ-ն օգնում հասնելու իրական դրական արդյունքների: Օգտատերերի կարծիքով, ամենից շատ արդյունքներ գրանցվել են՝

- մարդու իրավունքների եւ սոցիալական արդարության համար պայքարում,
- քաղաքաշինական անօրինականությունների դեմ պայքարում,
- բիզնեսի զարգացման գործում,
- բանակում օրինականության պահպանման համար պայքարում,
- կոռուպցիայի դեմ պայքարում՝ կոռուպցիոն տարբեր դրսեւորումների մասին կոնկրետ ՖՖ-յան հաղորդումների տեսքով,
- արտաքին քաղաքական քարոզչության բնագավառը նույնպես մատնանշվել է, սակայն ավելի քիչ անգամ (Տես՝ Հավելված, Աղյուսակ 3):

Որպես օրինակներ օգտատերերը առաջին հերթին բոլորից շատ անգամ նշել են քաղաքացիական վերջին նախաձեռնություններում ունեցած հաջողությունները (տրանսպարտի սակագների բարձրացման դեմ հանրային բողոքները, բնապահպանական մի շարք ակցիաները): Սակայն օրինակների ցուցակում կան նաեւ մեկ տարի առաջվա եւ ավելի վաղ գրանցված արդյունքները: Սրանք հանրային եւ մասնավոր բնույթի օրինակներ են (մատնանշվել են ընդամենը 41 տարբեր օրինակներ):

Ինչպես սա՝ «ԱԺ նախագահը մեքենա ուղարկեց իմ ստատուսից հետո, երբ գրել էի, որ մեքենա է պետք Չինարի գյուղի երեխաների համար օգնություն տանելու համար»:

Կամ այս մեկը՝ «ԱԺ-ում թեքահարթակ կառուցեցին իմ ստատուսից սկսված ՖԲ-յան քննարկումների արդյունքում»:


Կամ էլ՝ «Հենց մեր շենքի տակ կառուցվող անօրինական շինությունը կարողացանք ապամոնտաժել, քանի որ հանրության ուշադրությունը գրավեցի ՖԲ-յան իմ գրառման շնորհիվ»:

## Ֆեյսբուքյան խմբերի նշանակությունը

Մեր հարցումներին մասնակցած 150 օգտատերերի մոտ կեսը (75) ֆեյսբուքյան այս կամ այն խմբի անդամ է: Նրանց մեջ կան այնպիսիք, որոնք ընդգրկված են միայն 1 խմբում (4 օգտատեր): Մյուսները՝ միաժամանակ մի շարք խմբերի անդամներ են: Կա մի օգտատեր՝ քաղաքացիական ակտիվիստ, որը միաժամանակ 286 խմբերի անդամ է: Եվ սա հարցվածների շրջանում գրանցած ռեկորդային ցուցանիշ է:

Խմբերի մասին օգտատերերի կարծիքները՝ ստորև.

### Դուք արդյունավետ համարո՞ւմ եք ՖԲ-ում գործող խմբերը





# Ի՞նչ են փնտրում օգտատերերը Ֆեյսբուքում

Մա պարզելու համար համադրենք մի քանի այլ հարցերի պատասխանները: Թե ինչո՞ւ են նրանք դարձել Ֆեյսբուքի օգտատեր (այլ խոսքերով՝ հասկականք ցանցի մասին նրանց ապրիորի պատկերացումները), թե ի՞նչ են նրանք ամենից հաճախ անում Ֆեյսբուքում (ծանոթանանք նրանց փաստացի գործողություններին) եւ ի՞նչ է Ֆեյսբուքը նախելառաջ նրանց համար (հասկանանք ՖԲ-ի գնահատման նրանց չափանիշները):


## Ինչո՞ւ դարձան Ֆեյսբուքի օգտատեր

հարցին ի պատասխան ամենից շատ անգամ նշվել են՝

- տեղեկատվության տարածման եւ ստացման համար,
- շփման եւ կապի մեջ լինելու համար:


Ապա՝ աստիճանաբար նվազման կարգով՝

- արձագանքներ ստանալու պահանջի համար,
- ինքնարտահայտվելու հարթակ ունենալու համար,
- բիզնեսի առաջխաղացման համար,
- մրցակիցներից ետ չմնալու համար
- քանի որ Ֆեյսբուքում լինելը մոդայիկ է,
- ուրիշների խորհրդով,
- գովազդի համար,
- արագ եւ հեշտ կապի մեջ լինելու համար,
- կազմակերպական այս գործիքն ունենալու համար,
- փորձի համար (հետաքրքիր էր, թե այս ցանց ի՞նչ է)
- մասնագիտական հետաքրքրությունից ելնելով (մարդկանց տրամադրություններին եւ վիրտուալ տարածքում նրանց պահվածքին հետեւելու համար)
- հրապարակային լինելու համար:



**Ի՞նչ է ֆեյսբուքը նրանց համար օգտատիրական որոշ հմտություններ ձեռքբերելուց և ցանցում 1-6 տարի գործելուց հետո.**

- լսարան է,
- շփում ընկերների հետ,
- հասարակական-քաղաքական գործունեության միջոց է,
- աշխատանք է,
- էլփոստ է,
- բիզնեսը զարգացնելու միջոց է,
- ժամանց է,
- արդյունավետ գովազդի միջոց է,
- ոչ քաղաքական միջոցառումներ կազմակերպելու միջոց է,
- ռեյտինգներ և թրաֆիկներ ավելացնելու միջոց է,
- տեղեկատվության և կոնտակտների բազա է,
- ոչ այնքան արդյունավետ, որքան անվճար գովազդի միջոց է,
- հետազոտության նյութ է:



Ֆեյսբուքում օգտատերերը գլխավորապես տեղեկատվություն են փնտրում (ծանոթանում են ժապավենիս նյութերին, տեղեկատվություն են տարածում, ծանոթանում են ընկերներիս գրառումներին), հետո՝ շփում (գրուցում են օնլայն ընկերներիս հետ, կարդում են նամակներս և պատասխանում, արձագանքում են ինձ ուղղված հարցերին): Մոտավորապես նույն ակտիվությամբ, ինչ որ շփումն ընկերների հետ, հայտնում են իրենց կարծիքը տարբեր իրադարձությունների մասին և զբաղվում են իրենց բիզնեսի զարգացմամբ, հաճախորդների քանակի ավելացմամբ: Մեծ հաշվով նման հաճախականությամբ էլ հաստատում են նոր կապեր և ուսումնասիրում են մրցակիցների էջերը (Տես՝ Հավելված, Աղյուսակներ 4, 5 և 6):

Փաստորեն Ֆեյսբուքում օգտատերերի մեծ մասը ստացել է ունեն այն, ինչի համար էլ եկել են այս ցանց՝ տեղեկատվության տարածման և ստացման, լսարանի, շփման և կապի, գովազդի և բիզնեսի զարգացման հնարավորություն: Բայց կան նաև մի քանի «բացահայտումներ», որ թվով ավելի քիչ օգտատերեր արել են արդեն ցանցից օգտվելու ընթացքում (կամ սեփական, կամ ուրիշ օգտատերերի փորձն աչքի առաջ ունենալուց հետո): Դրանք են Ֆեյսբուքի նաև էլփոստ լինելը, որպես ժամանցի միջոց կիրառելը և այլն:

**Ի՞նչն է նրանց դուր գալիս եւ հակառակը՝ զայրացնում, հունից հանում այս սոցիալական ցանցում:**

Ըստ էության դուր եկած հանգամանքների ցանկը գրեթե նույնությամբ, բայց տարբեր ասպեկտներով կրկնում է «Ի՞նչ է Ֆեյսբուքը Ձեզ համար հարցի պատասխաններին».

- ազատությունն ու անկաշկանդությունը, որ չկա ՁԼՄ-ներում,
- մատչելիությունն ու տեղեկատվության արագ տարածման հնարավորությունը,
- գրելու չափավոր կախվածությունը,
- գործնական կոնտակտների արագ կազմակերպումը,
- նոր խելացի մարդկանց բացահայտումը,
- հանրային կարծիք ձեւավորելը,
- հաջողված ծաղրանկարները, հումորը,
- մարդկանց անմիջականությունն ու անկեղծությունը,
- տարիքային սահմանների եւ հեռավորության անտեսումը,
- դժվարության մեջ ընկած մարդկանց օգնելու մղումը եւ կոնկրետ օգնությունը եւ այլն:

**« Ի՞նչն է ամենից շատ հունից հանում Ֆեյսբուքում» հարցը բացահայտեց մի շարք այսպես կոչված «ուղեկցող երեւույթներ», ինչպես նաեւ՝ ժամանակակից տեղեկատվական հոսքերին բնորոշ հանգամանքներ:**

**Ֆեյսբուքի հայաստանյան օգտատերերին զայրացնում է,**

- երբ մարդիկ ներկայացնում են կես ժամը մեկ իրենց անձնական կյանքը,
- երբ հիմար կամ տխուր նյութերի, դժբախտ պատահարների մասին նյութերի տակ լայքում են,
- փոխադարձ անհանդուրժողականությունն ու պոռոտախոսությունը համակարգչի առաջ,
- սեւեռուն գովազդն ու սպամը,
- հայերենի չիմացությունը եւ ոչ հայատառ ստատուսներն ու քումենթները,
- երբ պարտադրված պետք է լայքես (նյութը կարդալու համար, կամ էլ, որ հետո ծանոթներդ չնեղանան),
- երբ օգտատերը լայքում է իր իսկ դրած նյութը կամ նկարը, կամ նրա ընտանիքի անդամն է լայքում՝ ասենք ամուսինը կնոջ նկարը, կինը՝ ամուսնու,
- երբ զգում ես, որ կախվածության մեջ ես ընկնում,
- երբ սկսում են ուրիշների դժբախտությունների մասին ահաստատու պատմություններ տարածել,
- երբ սկսում են հետապնդել ու տանջել աստղերի, քրեական տարրերի, սեքսի մասին իրենց նյութերով,
- երբ ինչ-որ հիմար խաղի հրավերներ են գալիս, կամ խնդրում են լայքել իրենց էջը,
- երբ առանց հարցնելու տարբեր խմբերում են ընդգրկում,

- երբ անունս tag են անում ինձ չվերաբերող նկարներում,
- երբ մարդիկ խիստ լուրջ են ընդունում օնլայն միջավայրը,
- երբ չեն հասկանում, թե ինչի համար է ՖԲ-ը եւ այն շփոթում են Օդնոկլասնիկի հետ,
- այն, որ փոքրիկներն էլ կարող են օգտվել եւ գտնվել հասուն մարդկանց հետ նույն միջավայրում:

## Մեր օգտատերերի իդենտիֆիկացման ընդհանուր եւ մասնավոր շտրիխներ

Մեր հարցումներին մասնակցած օգտատերերին ըստ նրանց զբաղվածության բնույթի բաժանել էինք 5 տարբեր խմբերի՝ հասարակական-քաղաքական գործիչներ/քաղաքացիական ակտիվիստներ, լրագրողներ/մեդիա ղեկավարներ, կրթական/մշակութային բնագավառի ներկայացուցիչներ, բիզնեսի ներկայացուցիչներ, ոչ հանրային, սովորական քաղաքացիներ: Յուրաքանչյուրում՝ 30-ական օգտատեր: Նրանց ընտրությունը կատարել ենք՝ կիրառելով մի քանի սկզբունքներ եւ նպատակ ունենալով ի վերջո ստանալու Ֆեյսբուքյան հայաստանյան հանրությանը հնարավորինս մոտ մանրապատկերը:

Այսպես, քաղաքական-հասարակական գործիչներ/քաղաքացիական ակտիվիստներ խմբում ընդգրկվեցին քաղաքական կուսակցությունների Ֆեյսբուքում ներկայացված եւ մյուսներից ավելի ակտիվ (ղեկավար) անդամներ, ԱԺ պատգամավորներ, հասարակական նախաձեռնությունների ղեկավարներ եւ անդամներ, առանձին քաղաքացիական ակտիվիստներ: Մեր հարցերին պատասխանել են ՀՀԿ, ԲՀԿ, «Ժառանգություն», ՀԱԿԿ, ՀՅԴ, «Նոր ժամանակներ», «Ազատ դեմոկրատներ», «Ազատություն» կուսակցությունների, Նախախորհրդարան նախաձեռնության ղեկավարները եւ անդամները:

Լրագրողների եւ մեդիա ղեկավարների խումբը կազմվեց 23 տարբեր լրատվամիջոցների աշխատակիցներից ու հենց Ֆեյսբուքում կատարած գրառման համար աշխատանքից հեռացված մեկ լրագրողից (Կ.Եղիազարյան): Մասնավորապես՝ «Առավոտ», «168 Ժամ», «Ազգ», «Գոլոս Արմենիի», «Ժողովուրդ» թերթերի, «Արմենիա», Հ1, «Կենտրոն», «Երկիր մեդիա», «Գալա», «Շողակաթ» հեռուստաընկերությունների, «Հետք», lragir.am, news.am, zham.am, 1in.am, էլեկտրոնային թերթերի, «Ազատություն» ռադիոյի եւ Հանրային ռադիոյի, panorama.am, asekoze.am կայքերի, arminfo.am, newsarmenia.am, mediamax.am ինֆորմացիոն գործակալությունների ներկայացուցիչները:

**Կրթության և մշակույթի** բնագավառը ներկայացվեց 21 արվեստագետների (դերասաններ, կոմպոզիտոր, կինոռեժիսոր, նկարիչներ, կինոգետ, երգիչներ) և 9 կառույցների միջոցով (թատրոններ և բուհեր):

**Բիզնեսի** խմբում 5 անհատ ձեռներեցներ են և 25 բիզնես կառույցներ (բժշկական կլինիկա, սպա սրահներ, բանկեր, խանութներ և գեղարվեստի սրահ, տուրիստական գործակալություն, հյուրանոցներ և սրճարաններ, հեռահաղորդակցական ընկերություն):

**Սովորական քաղաքացիների** 30 հոգանոց խմբում բացի տարբեր մասնագիտությունների տեր օգտատերերից կան նաև 3 ուսանողներ և 7 գործազուրկներ:

Նրանց ճնշող մեծամասնությունը քաղաքական կամ հասարակական կազմակերպությունների անդամ չեն, երբեւէ չեն էլ եղել: Ընդհանուր առմամբ աշխատել ենք 116 անհատ օգտատերերի և 34 կառույցների հետ:

Անհատ օգտատերերի տարիքային և սեռային պատկանելությամբ կազմված խմբերի մասին ցուցանիշները և վերը բերված նկարագրությունների մանրամասները Հավելվածում (Տես՝ Հավելված, Հարցված օգտատերերի տարիքը, զբաղվածությունը, սեռը, քաղաքական-հասարակական գործունեության փորձը):

Բիզնես և կրթական կառույցներն ունեն տարբեր տարվա պատմություն: Ինչպես, ասենք այս տարվա ամռանից գործող Tai-Hai սպա սրահը, կամ՝ 23 տարի առաջ իր գործունեությունը սկսած Պրոմեթեյ բանկը, 75 տարեկան «Բուկինիստ» գրախանութը 91տարվա պատմություն ունեցող Երեւանի պետական մանկավարժական համալսարանը և այլն:

**Մեր հարցումը հասցեական է եղել, ոչ անոնիմ:** Հարցերին պատասխանած անհատ օգտատերերի և կառույցների ներկայացուցիչների ցանկը՝ Հավելվածում :

# Եզրակացություններ

- Ի տարբերություն նախորդ տարիների, այժմ Ֆեյսբուքյան լսարանը կարելի է համարել հայաստանյան հասարակության մի մանրակերտը, որտեղ կան տարբեր բնագավառների, քաղաքական ու հասարակական ակտիվության, տարբեր տարիքի, նախասիրությունների, սովորույթների եւ վերջապես տարբեր դրդապատճառներով հենց այս ցանցն օգտագործող անհատներ, կառույցներ, կազմակերպություններ ու նույնիսկ գովազդի կարիք չունեցող հանրահայտ բրենդներ:
- Ֆեյսբուքից, ինչպես ցանկացած այլ սոցցանցից օգտվելը նշանակում է տիրապետել որոշ տեխնիկական հմտությունների, ունենալ որոշ մակարդակի պատրաստվածություն եւ անցնել որոշակի ֆիլտրերով: Բայց ինչպես ցանկացած սոցցանց, Ֆեյսբուքն էլ է առանձնանում իր օգտատիրական կազմով:
- Մեր հարցումներին մասնակցած օգտատերերի զգալի մասն ունի Ֆեյսբուքից օգտվելու 1-6 տարվա փորձ, եւ նրանց պատասխանները հիմնվում են դրա վրա: Ինչպես վկայում են մեր մի քանի հարցերի պատասխանները, ՖԲ-ի մասին նրանց ապրիորի եւ փաստացի պատկերացումներն իրարից շատ չեն տարբերվում:
- Սա մյուս կողմից խոսում է այն մասին, որ Հայաստանում ՖԲ-յան լսարանի ստաբիլ մեծացման հիմքում ընկած է այս ցանցի տարատեսակ գովազդը՝ Ֆեյսբուքից ՉԼՄ-ների արած մեջբերումների, ծանոթ-բարեկամների պատմածների տեսքով եւ այլն:
- ՖԲ-յան օգտատերերի մոտ կեսը նախկինում սոցիալական ցանցերից օգտվելու փորձ են ունեցել, եւ պետք է ենթադրել, որ դեպի ՖԲ նրանց ուղղորդած գլխավոր գործոնը ՖԲ-յան լսարանն է եղել. այստեղ ավելի լուրջ գործընթացներ կան, այստեղ ավելի արդյունավետ է քաղաքական ու բիզնես նկատառումներով, կամ ավելի հետաքրքիր է սովորական քաղաքացիների համար, քանի որ այստեղ են նաեւ նրանց ծանոթներն ու ընկերները: Օրինակ, անհատ ձեռներեցները միայն ՖԲ-ի, կամ նաեւ ՖԲ-ի միջոցով են իրացնում իրենց ապրանքները, ձեռքի աշխատանքները, լրագրողները բացի տեղեկատվության տարածումից տեղեկատվություն են քաղում իրենց նյութերի համար եւ այլն: Հիշեցնենք, որ մի զգալի հատված են կազմել այն օգտատերերը, որոնք ՖԲ-ն իրենց աշխատանքն են անվանել:
- Ֆեյսբուքյան հայաստանյան սեզմենտը գլխավորապես ներհայաստանյան երեւույթ է: Արտաքին կապեր ստեղծելու, այլ ազգային հարթակների առաջ բացվելու եւ

նրանց հետ լայն շփումների միջոց ՖԲ-ը Հայաստանում չի դիտվում: Եւ այս մասին է վկայում այն հանգամանքը, որ շոշափելի է այն օգտատերերի քանակը, որոնք ընկերների ցանկում առհասարակ չկան ոչ հայ, այլ երկրներում ապրող այլազգի օգտատերեր: Մի կողմից դա կարելի է բացատրել նրանով, որ արտաքին կապեր ստեղծելու, մյուս ազգային հարթակների առաջ բացվելու համար անհրաժեշտ են հավելյալ հմտություններ (օրինակ՝ օտար լեզուների իմացություն): Բայց մյուս կողմից էլ՝ նրանց ՖԲ-յան օգտատեր դառնալու գլխավոր նպատակը, ինչպես երևում է պատասխաններից, արտաքին շփումները չեն եղել:

- ՖԲ-ը բոլոր օգտատերերի համար նախելառաջ տեղեկատվության ակտիվ ու լայն շրջանառման վայր է: Եվ Ֆեյսբուքի մասին օգտատերերի այս ապրիորի պատկերացումները հաստատվել են նրանց արդեն փաստացի օգտատեր դառնալուց հետո:
- Ֆեյսբուքը բացառիկ տեղեկատվական աղբյուր է դառնում միայն այսպես կոչված լարված, ոչ ստանդարտ իրավիճակներում: Մյուս դեպքերում այն ծառայում է որպես կամ տեղեկատվության հղումների շտեմարան, կամ էլ՝ միայն շփման հարթակ: Թեև մեծամասնություն չի կազմում, սակայն նաեւ փոքր չէ այսպես կոչված մեդիանիհիլիստերի (նրանց, ովքեր մամուլ չեն կարդում, հեռուստատեսություն չեն դիտում եւ բավարարվում են միայն ՖԲ-յան տեղեկատվությամբ) քանակը:
- ՖԲ-ում օգտատերերի մեծ մասը ցանցում բավական ժամանակ է անցկացնում՝ առնվազն 2 ժամ, եւ դա է հիմնականում այն պատճառը, որ այլ սոցցանցերը կամ մղվել են երկրորդ պլան, կամ էլ առհասարակ օրակարգում չեն (ժամանակ չկա):
- ՖԲ-ում օգտատերերի պահվածքը մեծ մասամբ նույնն է, ինչ որ իրական կյանքում: Սա եւս գալիս է ապացուցելու այն պնդումը, որ այս սոցիալական ցանցը Հայաստանում օգտագործվում է ոչ թե պարզապես ժամանցի ու անձնական շփումների, այլ կոնկրետ, բիզնես նպատակներով: Երբ քաղաքական գործիչը ՖԲ-ում մնում է քաղաքական գործիչ, լրագրողը՝ լրագրող, մշակութային գործիչը՝ մշակութային գործիչ: Չնայած, որ ըստ պատասխանների քանակի օգտատերերը համեմատաբար ավելի քիչ անգամ են նշում, որ իրենց նպատակը ՖԲ-ում գովազդն է: Հատկանշական է նաեւ, որ ՖԲ-ը աշխատանք համարած օգտատերերն էլ աննշան քանակի չեն:
- Բացի սովորական քաղաքացիներից օգտատերերի մեծ մասը օգտագործում է ՖԲ-յան ինտերակտիվության բոլոր ձևերը (Like, Share, Comment): Նրանց գնահատականներն իրենց ակտիվ կամ պասիվ օգտատեր լինելու մասին, ու նրանց իսկ կողմից տրված հիմնավորումները բացահայտում են, որ օգտատերերն ունեն



տարբեր, հաճախ իրար բացառող պատկերացումներ ցանցային ակտիվության կամ պասիվության մասին: Քանի որ մի դեպքում որպես իրենց ակտիվության ցուցանիշ նրանք անվանում են ՖԲ-ում անցկացրած ժամանակը եւ միայն տեղեկատվություն ստանալն առանց որեւէ ինտերակտիվության, մյուս դեպքում՝ ՖԲ մտնելու հաճախանակությունը, երրորդ պարագայում նրանց ունեցած լսարանի չափը, չորրորդում մյուս օգտատերերի կողմից նրանց նկատմամբ դրսեւորած հետաքրքրությունը եւ այլն:

- Հակասական են կարծիքներն այն մասին, թե արտահայտողն է արդյոք ՖԲ-ը երկրում հանրային կարծիքների ողջ բազմազանությունը: Եվ այո, եւ ոչ: Ասենք քաղաքական եւ հանրային գործընթացների նկատմամբ ավելի պակաս հետաքրքրություն ցուցաբերող սովորական օգտատերերի տեսանկյունից՝ այո, արտահայտում է: Իսկ լրագրողների ու քաղաքական գործիչների տեսանկյունից, այսինքն՝ նրանց, ովքեր մասնագիտության բերումով են զբաղվում այդ հանրային կարծիքի ձեւավորմամբ՝ ոչ:
- ՖԲ-ն, ինչպես ցանկացած այլ բան, ունի իր դրական եւ բացասական կողմերը: Ավելի բազմազան են բոլոր այն հանգամանքները, որոնք կամ դուր չեն գալիս, կամ էլ պարզապես հունից հանում են օգտատերերին: Եվ դրանց շարքում կան ոչ միայն հանրային տեղեկատվության եւ հարաբերություններին բնորոշ բացասական երեւոյթները (ցուցամոլություն, ոչ կոմպետենտ կարծիքների կամ կեղծ տեղեկատվության տարածում եւ այլն), այլեւ այսպես կոչված գուտ ՖԲ-յան երեւոյթները (լայքելու հրավերները կամ ինչ-որ բան կարդալու համար պարտադրված լայքելը, հետապնդող առաջարկները, առանց օգտատիրոջ համաձայնության նրանց տաբեր խմբերում ընդգրկելը եւ այլն): Եվ չնայած, որ այն բաները, որոնք դուր են գալիս ՖԲ-ում իրենց բազմազանությամբ զիջում են դուր չեկող հանգամանքներին, օգտատերերի քանակը ոչ միայն չի նվազում, այլեւ, ինչպես արդեն նշել ենք, գնալով ավելանում է, ընդ որում՝ ստաբիլ չափերով եւ տեմպերով:

# Հավելված

Աղյուսակ 1. Որքա՞ն հաճախ են օգտվում ՖԲ-ից, որքա՞ն ժամանակ են անցկացնում ՖԲ-ում իրենց ակտիվ եւ պասիվ համարող օգտատերերը

Դուք Ձեզ ակտիվ օգտատեր համարո՞ւմ եք		Որքա՞ն հաճախ եք մուտք գործում ՖԲ	Որքա՞ն ժամանակ եք օրական միջին հաշվարկով անցկացնում ՖԲ-ում				
			Մինչև 30 րոպե	Մինչև 1 ժամ	2 եւ ավելի ժամ	Տարբեր տեւողությամբ	Ընդամենը
Այո (ակտիվ եմ)	<b>103 (69%)</b>	Ամիսը երկու անգամ	0	1	0	0	1
		Օրը մեկ անգամ	3	4	6	1	14
		Օրը մի քանի անգամ	1	14	37	6	58
		Ես ՖԲ-ից դուրս չեմ էլ գալիս, ես գրեթե միշտ օնլայն եմ	1	1	6	18	26
		Տարբեր հաճախականությամբ, կախված իրավիճակներից	2	0	2	0	4
		<b>Ընդամենը</b>	<b>7 (7%)</b>	<b>20 (19%)</b>	<b>51 (50%)</b>	<b>25 (24%)</b>	<b>103</b>
Ոչ (պասիվ եմ)	<b>40 (27%)</b>	Ամիսը երկու անգամ	1	0	0	0	1
		Օրը մեկ անգամ	2	9	1	1	13
		Օրը մի քանի անգամ	5	3	10	2	20
		Ես ՖԲ-ից դուրս չեմ էլ գալիս, ես գրեթե միշտ օնլայն եմ	0	0	5	0	5
		Տարբեր հաճախականությամբ, կախված իրավիճակներից	0	1	0	0	1
		<b>Ընդամենը</b>	<b>8 (20%)</b>	<b>13 (33%)</b>	<b>16 (40%)</b>	<b>3 (8%)</b>	<b>40</b>
Կախված է իրավիճակներից	<b>7 (5%)</b>	Օրը մեկ անգամ	2	2	0	0	4
		Օրը մի քանի անգամ	0	1	0	1	2
		Ես ՖԲ-ից դուրս չեմ էլ գալիս, ես գրեթե միշտ օնլայն եմ	0	0	0	1	1
		<b>Ընդամենը</b>	<b>2 (29%)</b>	<b>3 (43%)</b>	<b>0 (0%)</b>	<b>2 (29%)</b>	<b>7</b>

**Աղյուսակ 2. Ինչպե՞ս են սովորաբար արձագանքում դուր եկած, կամ՝ հակառակը, դուր չեկած տեղեկատվությանն իրենց ակտիվ եւ պասիվ համարող օգտատերերը**

Դուք Ձեզ ակտիվ օգտատեր համարո՞ւմ եք		Ինչպե՞ս եք արձագանքում սովորաբար Ձեզ դուր եկած, կամ հակառակը՝ դուր չեկած տեղեկատվությանը		
		Արտահայտում եմ վերաբերմունքս Like, Share, Comment կոճակների միջոցով	Պարզապես կարդում եմ եւ մտովի եմ արձագանքում	Այլ պատասխան
Այո (ակտիվ եմ)	<b>103 (69%)</b>	70	20	18
Ոչ (պասիվ եմ)	<b>40 (27%)</b>	20	13	10
Կախված է իրավիճակներից	<b>7 (5%)</b>	2	0	5
<b>Ընդամենը</b>	<b>150 (100%)</b>	<b>92 (61%)</b>	<b>33 (22%)</b>	<b>32 (21%)</b>

**Աղյուսակ 3. Հանրային ո՞ր բնագավառներում է ՖԲ-ն օգնում հասնելու իրական դրական արդյունքների**

Հանրային ո՞ր բնագավառներում է ՖԲ-ն օգնում հասնելու իրական դրական արդյունքների	Պատասխանների քանակ	%
Ներքաղաքական պայքար (ընտրական գործընթացներ, ներքաղաքական լարված իրավիճակներ, իշխանություն-ընդդիմություն պայքար եւ այլն)	52	35%
Մարդու իրավունքների եւ սոցիալական արդարության համար պայքար	88	59%
Բանակում օրինականության պահպանման համար պայքար	23	15%
